Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/31 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար վառելիքի (բենզին ռեգուլյար)ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

6 դեկտեմբերի 2021 թ.
ժամը 10:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արեն Մեսրոպյանը, անդամներ՝ Արթուր Մանուկյանը, Վարդ Խաչատրյանը, և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/31 ծածկագրով գնման ընթացակարգի հատերի բացման, գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արեն Մեսրոպյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Պլանավորված գին /ՀՀ դրամ /
1	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	87500000	116250000
	«ՖԼԵԾ» ՍՊԸ		106250000	
	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ		108333333.34	

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես Հավելված 1.2-ում հայտարարագիր ներկայացնող անձի փոխարեն ստորագրել է այլ անձ: Հաշվի առնելով վերոգրյալը

Հանձնաժողովը որոշեց՝

-Ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին առաջարկել հրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արեն Մեսրոպյան

անդամներ _____ Արթուր Մանուկյան

_____ Վարդ Խաչատրյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան